ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամ Տիգրան Մարկոսյանի «Իրավունքի գերակայություն. մտավոր սեփականության իրավունքներ» թեմայով Բաց աշխարհ 2024 ծրագրին մասնակցելու նպատակով Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Մասնակցի անուն, ազգանուն և զբաղեցրած պաշտոն.

Տիգրան Մարկոսյան – Հանձնաժողովի անդամ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ Վաշինգտոն և Սիեթլ քաղաքներ, 2024 թվականի ապրիլի 2-ից 14-ը ներառյալ:

3. Գործուղման հիմքը.

Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանության հրավեր:

4. Գործուղման նպատակը.

Մասնակցություն «Իրավունքի գերակայություն. մտավոր սեփականության իրավունքներ» թեմայով Բաց աշխարհ 2024 ծրագրին:

5. Գործուղման արդյունքները.

Բաց աշխարհ 2024 ծրագրի շրջանակներում.

- կայացել են հանդիպումներ ԱՄՆ դաշնային շրջանային դատարանի Վիջինիա նահանգի արևելյան դատական շրջանի դատավոր Բրինքեմայի, Միջազգային առաջնորդության կոնգրեսական գրասենյակի, ԱՄՆ պետական դեպարտամենտի ներկայացուցիչների, Սիեթլի քաղաքային դատարանի, Քինգ վարչաշրջանի դատախազի գրասենյակի, Վաշինգտոն նահանգի դատավորների վարքագծի հանձնաժողովի, Թերսթոն վարչաշրջանի գերագույն դատարանի, ԱՄՆ արտոնագրերի և ապրանքանիշերի գրասենյակի, Վաշինգտոն նահանգի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի և Սիեթլի համալսարանի իրավագիտության դպրոցի ներկայացուցիչների հետ,
- Սիեթլի համալսարանի իրավագիտության դպրոցում հանդես եմ եկել մրցակցության և մտավոր սեփականության իրավունքի ոլորտներում առկա հիմնահարցերի վերաբերյալ ելույթով,
- կազմակերպվել են քննարկումներ ապրանքային նշանների քննության և բողոքարկման, մտավոր սեփականությանն առնչվող գործերի, առևտրային գաղտնիքի պահպանության վերաբերյալ,
- ներկայացվել են հանրային պաշտպանի դերը, ԱՄՆ դատական համակարգը և Միացյալ Նահանգներում դատավորների խորհրդի դերը:

Ծրագրին մասնակցությունը հնարավորություն է ընձեռել ուսումնասիրել մտավոր սեփականության ոլորտում ԱՄՆ փորձը, այդ թվում՝ ապրանքային նշանների անօրինական օգտագործման բացահայտման, ապրանքային նշանների շփոթության աստիճանի նմանության որոշման մեթոդաբանության, այդ թվում՝ փորձաքննությունների և սոցիոլոգիական ուսումնասիրությունների իրականացման գործընթացի, մտավոր սեփականությանն առնչվող գործերի դատական քննության ժամկետների, ապրանքային նշանների ապօրինի օգտագործմամբ պատճառված վնասների հաշվարկման վերաբերյալ մոտեցումների և հայցի ապահովման միջոցների կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:

6. Առաջարկություններ և գործուղման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններ

- Մտավոր սեփականությանն առնչվող գործերի դատարանի կողմից քննության առավել սեղմ ժամկետների նախատեսում,
- ապրանքային նշանների ապօրինի օգտագործմամբ պատճառված վնասների հաշվարկման մեթոդաբանության օրենսդրորեն հստակեցում,
- փորձաքննությունների և սոցիոլոգիական ուսումնասիրությունների իրականացման ինստիտուցիոնալ կարողությունների կատարելագործում,
- մտավոր սեփականության ոլորտում փորձի և գիտելիքների փոխանակման նպատակով համապատասխան փորձագետների այցերի կազմակերպման հնարավորություն՝ Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանության աջակցությամբ:

Հանձնաժողովի անդամ Տիգրան Մարկոսյան

17 ապրիլի, 2024 թվական